ՏԵՂԵԿԱԳԻՐ ՍՍՌՄ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՖԻԼԻԱԼԻ
ИЗВЕСТИЯ АРМЯНСКОГО ФИЛИАЛА АКАДЕМИИ НАУК СССР
№ 3, 1943

Ակադ. Վ. Լ. Կոմարով

# ՎԼԱԴԻՄԻՐ ԻԼՅԻՉ ԼԵՆԻՆԸ ԵՎ ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ[1]

«Մարդկության մեծ պարծանքը»—այսպես է Վլադիմիր Իլյիչ Լենինն անվանել գիտությունը։ Այս բառերի մեջ արտահայտվել է նրա բովանդակ հիացմունքը մարդկային իմացության անսահման հզորության նկատմամբ։ Լենինը ոչ միայն մասսաների մեծ առաջնորդ և կազմակերպիչ էր, այլև հանճարեղագույն գիտնական, տիպար «Գիտության մարդու, որ համարձակ կերպով պայքար էր մղում հնացած գիտության դեմ և ճանապարհ էր հարթում նոր գիտության համար» (Ստալին)։ Փիլիսոփայության, էկոնոմիկայի, պատմության վերաբերյալ նրա աշխատությունները մի նոր էտապ հանդիսացան համաշխարհային գիտության զարգացման մեջ։ Նա ավելի, քան որևէ մեկը, գիտեր, թե ինչպիսի ուժ է ինքնին գիտությունը, երբ մարդկության բարօրությանն է ուղղված։

Լենինը բազմիցս նշում էր, որ մարքսիզմը—դա գիտական սոցիալիզմն է։ Ի հակակշիռ ուտոպիստների ֆանտաստիկ կառուցումների՝ մարքսիզմը ելնում է հասարակական զարգացման օրենքների գիտական վերլուծումից։ Սոցիալիզմն առանց գիտության աներևակայելի է։ Մեր սոցիալիստական հասարակությունը գիտական հիմունքներով հսկայական մի պետություն կառուցելու առաջին օրինակն է համաշխարհային պատմության մեջ։ Հենց միայն սա ամբողջ ակներևությամբ ապացուցում է, թե ինչպիսի տեղ է գրավում մեր կյանքում գիտության հարցը։ Լենինի աշխատություններում այս հարցն ուսումնասիրված է լրիվ ծավալով և մեծ խորությամբ։ Հակիրճ հոդվածում այդպիսի ընդարձակ մի թեմա սպառել անհնարին է։ Ուստի ստիպված ենք կանգ առնել միայն մի քանի կողմերի վրա, որոնք բնորոշում են Լենինի վերաբերմունքը դեպի գիտությունը։

Լենինի աշխատությունների մեջ ամենից առաջ մենք գտնում ենք գիտական իմացության ընդհանուր սկզբունքների խոր մշակումը։ Լենինն ընդգծում էր, որ գիտությունն այն ժամանակ է միայն օգուտ բերում մարդկությանը, երբ տալիս է աշխարհի օբյեկտիվ, այսինքն ճշմարտացի պատկերը։ Ահա թե ինչու նա այնպես եռանդուն կերպով պայքարում էր կեղծ-գիտական փիլիսոփայական թեորիաների դեմ, որոնք ընդունակ են միայն մթագնելու հետազոտողների ուղեղը և տանելու նրանց միստիկայի ու խավարապաշտության թավուտները։

Լենինի «Մատերիալիզմ և էմպիրիոկրիտիցիզմ» գիրքը հենց նրանով էլ հիանալի է, որ դրա մեջ Վլադիմիր Իլյիչը մերկացրել է մաշվածապատ խրթնաբանությունները իդեալիստների, որոնք բացասում էին արտաքին աշխարհի օբյեկտիվությունը և իրերի իսկական բնույթը ճանաչելու մարդ-

[1] Ակադ. Վ. Լ. Կոմարովի սույն հոդվածի ռուսերենը տպագրված է „Вестник Академии Наук СССР", 1943 թ. № 1—2-ում։

կային ընդունակությունը։ Լենինը ցույց տվեց, որ այդ տիպի թեորիաները զինաթափում էին գիտնականներին և առաջնորդում նրանց դեպի մի անել փակուղի։ Լենինը ճիշտ այդպես էլ ապացուցեց, որ միայն մատերիալիստական փիլիսոփայության ուղիներում գիտնականին սպասում են արդյունավետ հետևանքներ։

Բնութագրելով մատերիալիզմի և իդեալիզմի պայքարը բնական գիտությունների մեջ, Լենինը գրում էր.

«Մի խոսքով, այսօրվա «ֆիզիկական» իդեալիզմը, ճիշտ այնպես, ինչպես երեկվա «ֆիզիոլոգիական» իդեալիզմը, միայն այն է նշանակում, որ բնագետների մի դպրոց բնագիտության մի բնագավառում գլորվել է դեպի ռեակցիոն փիլիսոփայությունը՝ չկարողանալով ուղղակի և մեկեն մետաֆիզիկական մատերիալիզմից բարձրանալ դեպի դիալեկտիկական մատերիալիզմը։ Այդ քայլն անում է և կանի արդի ֆիզիկան, բայց նա գնում է դեպի բնագիտության միակ ճիշտ մեթոդը և միակ ճիշտ փիլիսոփայությունը ոչ թե ուղղակի, այլ զիգզագներով, ոչ թե գիտակցաբար, այլ տարերայնորեն, պարզ չտեսնելով իր «վախճանական նպատակը», այլ նրան մոտենալով խարխափելով, երերվելով, երբեմն նույնիսկ հետևի կողմով։ Արդի ֆիզիկան երկունքի մեջ է։ Նա ծնում է դիալեկտիկական մատերիալիզմ։ Ծննդաբերությունը ցավագին է։ Բացի կենդանի և կենսունակ էակից՝ նա անխուսափելիորեն տալիս է մի քանի մեռյալ արդյունքներ, թափթփուկներ, որ անհրաժեշտ է ուղարկել աղբանոց։ Այդ թափթփուկների թվին է պատկանում ամբողջ ֆիզիկական իդեալիզմը, ամբողջ էմպիրիոկրիտիկական փիլիսոփայությունը՝ էմպիրիոսիմվոլիզմի, էմպիրիոմոնիզմի և այլնի, և այլնի հետ միասին» (հ. XIII, էջ 347—348, հայ. հրատ.)։

Գիտության համար ոչ նվազ վնասակար էր համարում Լենինը իդեալիստական թեորիաների հետ միասին՝ գիտնականի քաղաքական շահախնդրությունը, որ խանգարում է նրան տեսնելու իրերն իրենց իսկական լույսի տակ և օբյեկտիվ հետազոտությունը փոխարինում է ռեակցիոն ուժերի իդեոլոգիական արդարացմամբ։ Այս իմաստով վերին աստիճանի բնորոշ է այն, թե ինչպիսի հեռատեսությամբ Լենինը բացահայտել է գերմանական պաշտոնական գիտության ստորաքարշությունը և քաղաքական սարկամըտությունը, մի գիտություն, որ կաշվից դուրս գալով՝ ճգնում էր սպիտակերես դարձնել և արդարացնել գերմանական ռազմականությունը, ռեակցիոն տենդենցները Գերմանիայի կառավարող դասակարգերի, որոնք վաղուց արդեն միտք էին անում երկաթով ու արյամբ հասնել համաշխարհային տիրապետության։

«Ցաբերն» հոդվածում պատմելով, թե ինչպես Էլզասի փոքրիկ Ցաբերն քաղաքի բնակչությունը դայրացավ գերմանական բիրտ ու լկտի ռազմականության դեմ և մերկացնելով Ցաբերնի դեպքը որպես անարխիա որակելու գերմանական իմպերիալիզմի «գիտնական լակեյների» փորձերը Վ. Ի. Լենինը գրում էր. «Անարխիա» բառն ամբողջովին համակված է կալվածատերերի ու ռազմականության առաջ լակեյություն անող գերմանական պաշտոնական համալսարանական «գիտության» (թող թույլ տրվի ասել գիտության) ոգով, որը գովերգում էր արտասովոր «օրինականությունը» Գերմանիայում...

Ցաբերնում «դուրս ցատկեց» ոչ թե «անարխիան», այլ արվեց ու

դուրս եկավ Գերմանիայի իսկական կարգուկանոնը, պրուսական կիսաֆեոդալական հողատիրոջ թրի տիրակալությունը» (հատ. XVII, էջ 100)։

«Իմպերիալիզմը որպես կապիտալիզմի ամենաբարձր ստադիա» իր հայտնի աշխատության մեջ Լենինը նորից է վերադառնում այս թեմային։ Նա խոսում է գերմանական բուրժուական գիտնականների մասին որպես գերմանական գիշատիչ իմպերիալիզմի ապոլոգետների, որոնք ձգտում են կեղծ գիտական ֆրազեոլոգիայով սքողել այդ իմպերիալիզմի իսկական էությունը։

Գիտնականներից Լենինը պահանջում էր քաղաքական բացարձակ ազնվություն։ Նա բազմիցս մատնացույց էր անում, որ իրենց չեզոք գիտողներ պատկերել ջանացող մարդիկ իրականում քողարկում են միայն ռեակցիոն տենդենցները։ Գիտությունը ծառայում է կամ ռեակցիայի, կամ պրոգրեսի ուժերին։ Եվ Լենինն ամենայն կրքոտությամբ կոչ էր անում գիտնականներին՝ իրենց բոլոր ուժերը տալ համամարդկային պրոգրեսին։

* * *

Լենինն արժանին հատուցում էր անցյալի գիտության մեծ գործիչներին։ Իր «Ի՞նչ անել» գրքում նա մատնանշում էր ռուս գրականության համաշխարհային նշանակությունը։ Լենինյան այս գնահատականը լիովին վերաբերում է և ռուսական գիտությանը։ Լենինը պարծենում էր ռուսական գիտության մատերիալիստական հաստատուն տրադիցիաներով, որոնք ամենից ավելի ցայտուն կերպով երևան են եկել Չերնիշևսկու աշխատությունների մեջ։

Լենինը գրում էր. «Չերնիշևսկին միակ իրոք մեծ ռուս գրողն է, որ կարողացել է 50-ական թվականներից մինչև 88 թվականը մնալ ամբողջական ֆիլիսոփայական մատերիալիզմի մակարդակի վրա և մի կողմ նետել նեոկանտականների, պոզիտիվիստների, մախիստների և այլ խառնաշփոթիչների ողորմելի անհեթեթությունը» (հ. XIII, հայ. հրատ., էջ 402—403)։

Ռուս գիտնականներն ակնառու ավանդ են մտցրել համաշխարհային գիտության մեջ։ Մենդելեևի, Բուտլերովի և Զինինի աշխատությունները քիմիայի բնագավառում, Մեչնիկովի, Սեչենովի, Տիմիրյազևի գործերը բնագիտության ասպարեզում, Լոբաչևսկու մաթեմատիկական հայտնագործությունները հայտնի են ամբողջ կրթված մարդկությանը և մեծ ազդեցություն են գործել համամարդկային բովանդակ գիտության զարգացման վրա։ Նրանց աշխատությունների մեջ ռուսական գիտության այն տրադիցիաները, որոնցով արդարացի կերպով հպարտանում էր Լենինը, տվին իրենց փայլուն պտուղները։ Ընդունելով անցյալի գիտության բա-կայական ծառայությունները՝ Լենինն այդու հանդերձ բազմիցս ընդգծում էր, որ գիտությունն իսկական ազատություն և ստեղծագործական իսկական թափ ձեռք կբերի միայն սոցիալիզմի օրոք։

«Միայն սոցիալիզմը,— գրում էր Լենինը,— հնարավորություն կտա հասարակական արտադրությունը և պրոդուկտների բաշխումը լայնորեն տարածելու և ենթարկելու այն գիտական նկատառումներով. թե ինչպես բոլոր աշխատավորների կյանքը դարձնել առավել հեշտ, որը նրանց բարեկեցության հնարավորություն ընձեռի։ Միայն սոցիալիզմը կարող է իրականացնել այս» (հ. XXIII, էջ 41)։

Անցյալում, նշում էր Լենինը, գիտությունը քչերի սեփականությունն

էր և սոցիալիզմի օրով միայն կդառնա համաժողովրդական սեփականություն։ «Առաջ,—ասում էր Լենինը,—ամբողջ մարդկային խելքը, նրա ամբողջ հանճարն ստեղծագործում էր միայն նրա համար, որ մի կարգ մարդկանց տա տեխնիկայի ու կուլտուրայի բոլոր բարիքները, իսկ մյուսներին զրկի ամենաանհրաժեշտից՝ լուսավորությունից ու զարգացումից։ Իսկ հիմա տեխնիկայի բոլոր հրաշքները, կուլտուրայի բոլոր նվաճումները դառնալու են համաժողովրդական սեփականություն և այսուհետև մարդկային խելքն ու հանճարը երբեք բռնության միջոցների, շահագործման միջոցների չեն վերածվի։ Մենք այդ գիտենք,—և մի՞թե հանուն այդ պատմական մեծագույն խնդրի չարժի աշխատել, չարժի բոլոր ուժերը տալ։ Եվ աշխատավորները կկատարեն այս պատմական տիտանական աշխատանքը, որովհետև նրանց մեջ են ամփոփված ռևոլյուցիայի, վերածնության ու վերանորոգության նիրհող մեծ ուժերը» (հ. XXII, հայ. հրատ., էջ 284)։

Գիտության հսկայական ու բարերար դերի ճանաչումը մարդկանց կյանքում՝ որոշեց Լենինի վերաբերմունքը դեպի գիտությունը Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայից հետո։ Կուլտուրական ռևոլյուցիայի լենինյան պլանի մեջ բացառիկ դեր է խաղում աշխատավորների բազմամիլիոն մասսաների՝ գիտության պտուղներին տիրապետելու պրոբլեմը։ Լենինը չէր դադարում լուսավորության օրգաններից պահանջելու անդուլ և սիստեմատիկ աշխատանք կատարել մասսաների կուլտուրական դաստիարակման, ժողովրդի մեջ գիտության մեծ հարստությունները տարածելու համար։

Դրա հետ միասին, Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի բառացիորեն առաջին իսկ օրերից Լենինը սովետական գիտնականների առաջ դրեց խոշոր պատմական կարևորություն ունեցող խնդիրներ։ Լենինը բազմիցս ընդգծում էր, որ միայն այն գիտությունն է ուժեղ, որը հենվում է պրակտիկ փորձի վրա և այդ պրակտիկան առաջ է մղում։ Լենինը սովետական գիտությունից պահանջում էր թեորիայի ու պրակտիկայի միասնություն, գիտության և աշխատանքի սինթեզ։ Կոնկրետացնելով այդ ընդհանուր խնդիրը՝ Լենինը մշակեց երկրի տնտեսական վերակառուցման գործում, նրա տնտեսական և կուլտուրական վերելքի համար մղվող պայքարում ՍՍՌՄ Գիտությունների Ակադեմիայի մասնակցության ծրագիրը։ Նշանավոր «Գիտա-տեխնիկական աշխատանքների պլանի ուրվագծի» մեջ Լենինը գրում էր.

«Գիտությունների Ակադեմիային, որն սկսել է Ռուսաստանի բնական ոչ-արտադրողական ուժերի սիստեմատիկ ուսումնասիրությունն ու հետազոտությունը, պետք է անմիջապես ԺՏԳԽ-ի կողմից տալ հետևյալ հանձնարարությունը.

կազմել մի շարք հանձնաժողովներ մասնագետներից՝ Ռուսաստանի արդյունաբերության վերակազմության և տնտեսական վերելքի պլանը հնարավորության չափ ավելի արագ մշակելու համար։

Այդ պլանի մեջ պետք է մտնի.

արդյունաբերության ռացիոնալ տեղավորում Ռուսաստանում հումքի մոտիկության և աշխատանքի նվազագույն կորստի հնարավորության տեսակետից՝ հումքի վերամշակությունից կիսաֆաբրիկատների վերամշակման բոլոր հաջորդական աստիճաններին անցնելիս մինչև պատրաստի արդյունքի ստացումը։

Նորագույն առավել խոշոր արդյունաբերության և առանձնապես տրեստների տեսակետից արտադրության ռացիոնալ միավորումը և կենտրոնացումը փոքրաթիվ խոշորագույն ձեռնարկությունների մեջ։

Ներկայիս Ռուսաստանի Սովետական Ռեսպուբլիկայի (առանց Ուկրաինայի և առանց գերմանացիների գրաված մարզերի) հնարավորության առավելագույն ապահովումը իրեն ինքնուրույնաբար մատակարարելու հումքի և արդյունաբերության բոլոր ամենագլխավոր տեսակները։

Առանձին ուշադրություն դարձնել արդյունաբերության և տրանսպորտի էլեկտրիֆիկացիային և էլեկտրականության կիրառմանը երկրագործության մեջ։ Վառելանյութի ոչ առաջնակարգ տեսակների (տորֆ, վատ տեսակի ածուխ) օգտագործումը էլեկտրական էներգիա ստանալու համար՝ նվազագույն ծախսեր կատարելով վառելանյութի հանույթի և տեղափոխության վրա։

Ջրային ուժերն ու հողմաշարժիչերն ընդհանրապես և երկրագործության մեջ կիրառելիս» (Հ. XXII, ռուս. հրատ., էջ 562—563)։

Ծավալել երկրի բնական հարստությունների հետազոտությունը, ըստ ամենայնի օժանդակել սովետական պետության պաշտպանական հզորության բարձրացմանը, ժողովրդական մասսաների բարեկեցության անդադար ծավալմանը, գիտության ամբողջ հզորությունը տալ նոր, ազատ ու երջանիկ կյանքի կառուցմանը—սրանք էին հանգում ՍՍՌՄ Գիտությունների Ակադեմիային՝ Լենինի կողմից ձևակերպված անելիքները։

Լենինյան այս պլանը ՍՍՌՄ Գիտությունների Ակադեմիայի ամբողջ գործունեության հիմք դարձավ։ Մեր կոմունիստական պարտիայի և սովետական կառավարության լենինյան քաղաքականության շնորհիվ, Լենինի մեծ զինակից Իոսիֆ Վիսսարիոնովիչ Ստալինի անձնական ուշադրության ու հոգատարության շնորհիվ, ՍՍՌՄ Գիտությունների Ակադեմիան կարողացավ ակնառու հաջողությունների հասնել։ Մեր երկրում իրագործվեց լենինյան երազը—գիտությունն իրոք դարձավ համաժողովրդական սեփականություն։ Գիտությունների Ակադեմիան նեղ ու ինքնամփոփ կազմակերպությունից վերածվեց սովետական գիտության շտաբի։ 1917 թվի համեմատությամբ Գիտությունների Ակադեմիայի կոլեկտիվն աճեց 20 անգամ։ Ավելի քան 500 արշավախումբ է ուղարկված մեր երկրի բոլոր կողմերը՝ նրա բնական հարստությունները հետազոտելու համար։ Հազարավոր գիտական աշխատողներ լարված աշխատում են լենինյան ավանդների պրակտիկ իրագործման վրա։ Սովետական գիտությունն ազատ է փիլիսոփայական ռեակցիոն նախապաշարումներից, նա զինված է հետազոտության միակ իրոք գիտական մեթոդով՝ դիալեկտիկական մատերիալիզմով։ Սովետական գիտությունն ազատ է քաղաքական ռեակցիոն շահախնդրություններից, նա ծառայում է մարդկության ամենավեհ ու ամենապրոգրեսիվ իդեալներին։

Եվ այն, որ սովետական գիտությունն ընթացել է լենինյան ուղիով, թույլ տվեց մեզ Հայրենական պատերազմի օրերին արագ ու օպերատիվ կերպով վերակառուցել ամբողջ գիտական գործունեությունը մեր երկրի պաշտպանության շահերին համապատասխան կերպով։ Պատերազմի հենց առաջին օրերից սովետական գիտնականները լծվեցին ռազմաճակատին օգնություն ցույց տալու ակտիվ աշխատանքին։ Ճիշտ այնպես, ինչպես սովետական պետության արշալույսին Լենինը գծում էր Գիտությունների

Ակադեմիայի գործողությունների ծրագիրը, այժմ՝ Հայրենական պատերազմի օրերին, գործողությունների այդ մարտական ծրագիրը նոր պայմաններում ծավալեց մեծ Ստալինը։ ՍՍՌՄ Գիտությունների Ակադեմիայի պրեզիդենտի անունով տված հեռագրում ընկեր Ստալինը գրում էր. «Ես վստահություն եմ հայտնում, որ, չնայած պատերազմական ժամանակի դժվարին պայմաններին՝ Գիտությունների Ակադեմիայի գիտական գործունեությունը կզարգանա երկրի աճած պահանջներին համընթաց կերպով, և Գիտությունների Ակադեմիայի պրեզիդիումը, Ձեր ղեկավարությամբ, ամբողջ անհրաժեշտը կանի Ակադեմիայի առաջ դրված խնդիրներն իրագործելու համար»։

Գիտությունների Ակադեմիայի պրեզիդենտի անունով տված մի այլ հեռագրում ընկեր Ստալինը գրում էր. «Հույս ունեմ, որ ՍՍՌՄ Գիտությունների Ակադեմիան կգլխավորի նովատորների շարժումը գիտության ու արտադրության բնագավառում և սովետական առաջավոր գիտության կենտրոնը կդառնա մեր երկրի և բոլոր մյուս ազատասեր ժողովուրդների ամենակատաղի թշնամու գերմանական ֆաշիզմի դեմ ծավալվող պայքարում։

Սովետական Միության կառավարությունը վստահություն է հայտնում, որ գերմանական օկուպանտների դեմ սովետական ժողովրդի կողմից մղվող Հայրենական մեծ պատերազմի խստաշունչ օրերին ՍՍՌՄ Գիտությունների Ակադեմիան, Ձեր գլխավորությամբ, պատվով կկատարի իր հայրենասիրական վեհ պարտքը հայրենիքի հանդեպ»։

Ծավալել գիտական գործունեությունը երկրի աճած պահանջներին համապատասխանորեն՝ պատերազմական ժամանակի պայմաններում, գիտական գործունեությունն ուղղել մեր ռազմական հզորությունն ամեն կերպ ամրացնելուն, գլխավորել նովատորների շարժումը գիտության և արտադրության մեջ, պատվով կատարել իր հայրենասիրական վսեմ պարտքը հայրենիքի հանդեպ—ստալինյան այս պատմական ցուցումների մեջ տրված է լենինյան ցուցումների, գիտության հանդեպ լենինյան պահանջների հետագա զարգացումը՝ պատմական նոր գոյավիճակին համեմատ։

Ի. Վ. Ստալինի այս ցուցումներն իրագործելու վրա ուժերի ամբողջ լարումով աշխատում է այժմ ՍՍՌՄ Գիտությունների Ակադեմիան։

Մեր Կարմիր Բանակի և Ռազմա-ծովային Նավատորմի մարտական հզորությունը բարձրացնելու գործում, սովետական զենքի կատարելագործման գործում, արդյունաբերության ու գյուղատնտեսության արտադրողականությունն ավելացնելու համար մղվող պայքարում, հումքի աղբյուրներն ընդլայնելու համար մղվող պայքարում ՍՍՌՄ Գիտությունների Ակադեմիան հասել է լուրջ հետևանքների։ Սակայն մենք այդ գնահատում ենք լոկ որպես գալիք վիթխարի աշխատանքի սկիզբ։ Սովետական գիտնականներից ամեն մեկը երկրի պաշտպանության գործում իր ունեցած մասնակցությունը դիտում է որպես իր ողջ կյանքի ամենակարևոր և ամենաթանկ գործը։ Որովհետև մեզ համար ավելի վեհ ու սրբազան խնդիր չկա, քան թշնամու ջախջախումը։ Սովետական գիտնականները անդուլ-անդադար աշխատում են, որպեսզի պատվով կատարեն իրենց հայրենասիրական վսեմ պարտքը։